

ծուկի պես կը լողար եւ, երբ ինք կղզուոյն ափունքը գտաւ, այդ գազանը կէս ճամփան առած էր արդէն, ուստի անշփոթ փոքրիկ տղուն ձեռքէն բռնեց գիրկն առաւ: «Դու այստեղ այս լճափը նստէ, սիրուն Արփենիս, իմ աննման գաւալս, իմ գեղեցիկ հրեշտակս, աստուած քեզի պահապան լինի, մեր թշուառութիւնը քեզի ողորկութիւն դարձնէ եւ երջանիկ ընէ», – ըսաւ, համբոյրներով ծածկելով նորա երեսները եւ աչս առաջին անգամ աչս պարագային մէջ արցունքով թրջեց. եւ դնելով կղզին ծածկող ձարխոտին վրան՝ եղէգներու վարագուրի մը ետին՝ «Դու այստեղ պահուէ, գբեզ մէկը չտեսնէ, մինչեւ որ մենք գանք», – ըսաւ. տղան շփոթած մօրը խօսքը մտիկ ըրաւ եւ ձարխոտին մէջ ծածկուեցաւ: Ան ատեն ինք ձեռքերը երկինք տարածեց, կարճ աղօթք մ'ըրաւ մտքէն, վերջը գօտին քակեց Նազենիկին գօտուոյն անցած եւ իրեն կապեց եւ մակոյկին մէջի պզտի խարսխին չուանը նուէնպես իւր մէջքին կապեց եւ անթարթափ աչօք սկսաւ նաչիլ այդ սեւ խափշիկին, որ քանի կ'երթար կը մօտենար, երբ իւր ընկերներն ամենքը յուսահատ ետ դարձեր էին: Երբ տեսաւ, որ քանի մը նաւակի միայն միջոց մնաց չուր եւ նորա մէջ, ողորմուկ ձաչնով՝ «Տէ՛ր, մի՛ համարիր զայս ինձ ի մեղս», – ըսաւ եւ դրկելով գգուելով իւր Նազենիկը, նետուեցաւ լճին մէջք Թշուա՛ռ կին, չի տեսաւ նետ մը, որ նոյն միջոցին սլացաւ եւ զարկաւ խափշիկը, չի լսեց ձայն մը, որ գոչեց. «Ա՛յ Տիկին, մի...» ...լճին խաղաղ ջուրերը ճղքուեցան ըրպէ մը կղզուոյն քով՝ եւ վայրկեան մը ետքը կատարեալ միապաղաղ ծածկեցին այդ համեստութեան գոհը եւ գեղեցկութեան հրեշտակը: Քիչ անդին սոսկալի յիշոցք մը լսուեցաւ, ջուրը կարմիր ներկուեցաւ եւ ճղփիւն մը լսուեցաւ, որ իջեցուց լճին յատակը խափշիկին մարմինը:

Լճին եղերքը թափառող անօրինաց աչքերը տեսան այդ կնոջ եւ իր աղջկան ջուր նետուիլը, իրենց սեւերես ընկերոջ անունը գոչեցին քանի մը անգամներ. եւ երբ տեսան ձայն, պատասխան չի կար, յուսահատ՝ ժամանակ չի կորսնցնելու եւ բերդին աւարեն չի պակսելու համար թողին ծովեզրը եւ ներս մտան:

Ան ատեն լճին եղէգնուտին կողմէն ջուրը շարժեցաւ, հիմա ուրիշ մէկն էր կը լողար, բայց այնպէս որ հազիւ քիթը դուրս էր ջրէն, թելերը չէին շարժեր այլ ոտքերուն մահտները միայն, եւ այս գողի պէս լողացող մարդը եկաւ մօտեցաւ կղզուոյն անշշունջ, առանց երեւալու՝ միշտ եղէգներու սեգերն իրեն վարագոյր պահելով ելաւ ցամաք եւ գետնի վրայ սողալով գրեթէ եւ ոչ քայլելով իբրեւ թէ բան մը կը փնտրեր, եւ վերջապէս դտաւիր փնտրածը: Արփենի նստած՝ երկու թելերով ծունկերը գրկած՝ խոտերուն մէջ կէս մը կորսուած կը մտածեր. անշուշտ ինքնիրեն «Մայրիկը ուշացաւ» կ'ըսեր, երբ կամաց, հաստ եւ իրենց